Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

Հետազոտական աշխատանք թեմա՝Երաժշտադիդակտիկ խաղերը որպես երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց:Կատարող՝ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ գյուղի մանկապարտեզի երաժշտության դաստիարակ Լիլիթ Մխիթարյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

Ներածություն 4

Երաժշտական խաղերի նշանակությունը 6

Երաժշտական խաղերի տեսակները և ուսուցման մեթոդները 10

Երաժշտական խաղերը որպես ստեղծագործական Ունակությունների զարգացման միջոց 15

Փորձարարական մաս.....15

Եզրակացություն.....16

Ներածություն

Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման եզակի և որոշիչ շրջան է , երբ առաջանում են անհատականության հիմքերը, զարգանում է կամքն ու կամավոր վարքագիծը, ակտիվորեն զարգանում է երևակայությունը, ստեղծագործական մտքը և ընդհանուր նախաձեռնությունը: Այնուամենայնիվ այս բոլոր կարևոր հատկությունները ձևավորվում են ոչ թե մարզումների ժամանակ, այլ նախադպրոցական երեխայի առաջատար և հիմնական գործունեության՝ խաղի մեջ: Խաղը՝ դա ուրախություն է, գիտելիք և ստեղծագործություն: Խաղային գործունեությունը առաջատար է նախադպրոցական երեխայի համար. խաղը երեխայի կյանքն է, նրա գոյությունը, անհատի բարոյական որակների զարգացման աղբյուրը, նրա զարգացումն ամբողջությամբ:

«Նախադպրոցական տարիքի երեխաների համար խաղերը բացառիկ նշանակություն ունեն. նրանց համար խաղն ուսում է, խաղն աշխատանք է, խաղը կրթության լուրջ ձև է» – Ն. Կ. Կռուպսկայա

Դեռ վաղ մանկական տարիքից երեխան սիրում է վազել, թռչկոտել, պարային շարժումներ անել. սա դեռ խաղային, պարային գործունեություն չէ, որովհետև երեխան շարժվում է ոչ ճիշտ, ոչ էլ արտահայտիչ: Այդ հարցում մեծ դեր է խաղում նախադպրոցական հաստատությունում երաժշտական պարապմունքի ընթացքում կատարվող երաժշտառիթմական շարժումները, որոնց հիմքում ընկած են երաժշտական կերպարների ընկալումը և դրանք շարժման միջոցով պատկերելու, ներկայացնելու կարողությունը: Երաժշտառիթմական շարժման գործընթացում զարգանում են երեխաների երաժշտական որոշակի ընդունակություններ. մասնավորապես՝ երաժշտական ընկալումը, երաժշտառիթմական զգացողությունը, ռիթմիկ շարժումներ կատարելու, տարածության և ժամանակի մեջ ճիշտ կողմնորոշվելու կարողություններն ու գեղարվեստաստեղծագործական ունակությունները: Երաժշտառիթմիկ շարժումը մի միջոց է, որով զարգանում է երաժշտության նկատմամբ երեխայի հուզական արձագանքը: Երաժշտառիթմական շարժման գործընթացում ամենահետաքրքիրը և բովանդակալիցը երաժշտական խաղերն են, որոնք կիրառվում են նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական լսողությունը զարգացնելու, երաժշտություն լսելու ունակություն մշակելու համար: Երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ունակությունների զարգացմանը մեծ հնարավորություններ են ընձեռում: Երեխան կարողանում է ընկալել, զգալ և իմաստավորել երաժշտությունը՝ կապված խաղի բովանդակության հետ, հուզականորեն արձագանքել դրան: Երաժշտությամբ ուղեկցվող խաղային տարբեր գործողությունները ավելի հետաքրքրում են երաժշտության

ընկալումը: Դրա շնորհիվ երեխան լավ է զգում երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունն ու կառուցվածքը, կարողանում է տարբերել երաժշտական ստեղծագործության առանձին մասերը և իր շարժումները համաձայնեցնել ու ներդաշնակել նրա սկզբի և ավարտի հետ: Դա երեխաներից պահանջում է լսողական ուշադրություն և կենտրոնացում: Մեծ է երաժշտական խաղերի դերը նաև երեխաների ֆիզիկական դաստիարակության գործում:

Երաժշտական խաղերի նպատակը՝

- Ծանոթացնել երաժշտաութիկ գործունեության տեսակին, խթանել երաժշտախաղային երաժշտության ընկալունակությունը՝ ուշադրություն դարձնելով նրա բնույթի, տեմպի, ռիթմիկ արտահայտչականությանը,ստեղծագործության տարբեր մասերի բնույթի փոփոխությանը:
- Պարզ երաժշտական խաղերին ծանոթացնելու միջոցով երեխայի մեջ ցանկություն առաջացնել հաճույքով մասնակցելու դրանց՝ համապատասխանեցնելով շարժումը երաժշտության հետ:
- Սովորեցնել ճիշտ կողմնորոշվել տարածության և ժամանակի մեջ:
- Խթանել երեխաների ակտիվ մասնակցությունը երաժշտասյուժետային խաղերին՝ ստեղծելով երաժշտությանը համապատասխան խաղային կերպարներ:
- Զարգացնել երաժշտական խաղերում երեխաների նախնական ստեղծագործական կարողությունները:
- Զարգացնել արտահայտչամիջոցները, որոնք թույլ են տալիս հաղորդել խաղի բնույթը և բովանդակությունը:
- Երաժշտական խաղերի միջոցով զարգացնել երեխաների երաժշտական լսողությունը, ռիթմի, տեմբրի զգացողությունը

Երաժշտական խաղերի նշանակությունը

Ուսումնասիրելով կյանքի օրենքները, տեսնելով բնության մեջ շարժման ռիթմը՝ բժիշկները, երաժիշտները,մանկավարժները եկան այն եզրակացության, որ երեխաների առողջապահական և դաստիարակչական խնդիրները լուծելու համար շատ կարևոր է երաժշտության և շարժման համատեղ կիրառումը: Շարժման միջոցով բացահայտվում են երաժշտական ստեղծագործության բովանդակությունը,

կառուցվածքը, բնույթը, տեմպը, ուժգնությունը: Միաժամանակ շարժումը նպաստում է երաժշտական ստեղծագործության գիտակցական ընկալմանը: Երաժշտառիթմիկ շարժման ժամանակակից համակարգը ստեղծել է շվեցարացի մանկավարժ և երաժիշտ Էմիլ Ժակ-Դալկրոզը՝ հաշվի առնելով երեխայի շարժվելու բնական պահանջը՝ կապված աճի հետ: Հայտնի է, որ շարժման միջոցով երեխան ճանաչում է աշխարհը. Կատարելով տարբեր խաղային, պարային շարժումներ՝ նա խորացնում է իր պատկերացումները շրջակա աշխարհի վերաբերյալ: Երաժշտությունը երեխաների մեջ առաջացնում է շարժվելու ցանկություն: Երաժշտության դաստիարակի խնդիրն է զարգացնել երաժշտության բնույթին համապատասխան երեխայի շարժողական ռեակցիան: Երաժշտառիթմիկ շարժման ընթացքում ամրանում է նաև երեխայի օրգանիզմը: զարգանում են երաժշտական լսողությունը, հիշողությունը, ճարպկությունը, շարժումների ճշգրտությունը, արագությունը, մշակվում են շարժման այնպիսի հատկություններ, ինչպիսիք են՝ փափկությունը, ճկունությունը, ինչը նպաստում է իրանի ճիշտ զարգացմանը: Երաժշտառիթմիկ շարժումը հարստացնում է երեխաների հուզական աշխարհը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, դաստիարակում ակտիվություն, կարգապահություն, կոլեկտիվի զգացողություն, նպաստում է օրգանիզմի ֆիզիկական կատարելագործմանը:

Երաժշտառիթմիկ շարժման հիմնական տեսակներն են՝

- Քայլք, թեթև վազք,ցատկեր
- Մարմնամարզական շարժումներ համապատասխան պարագաներով՝ գնդակներ, ժապավեններ, դրոշակներ
- Պարային պարզ քայլքեր և տարրեր
- Նմանողական շարժումներ՝ կենդանիների,թռչունների, մարդկանց տարբեր շարժումների նմանակում:

Այս բոլոր շարժումները նպաստում են երեխաների պատկերացումների և ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Երաժշտական զարգացումը երեխայի ձևավորման արդյունքն է՝ ակտիվ երաժշտական գործունեության միջոցով:

Երաժշտական գործունեության ամենատարածված տեսակներն են՝ խաղը, պարը և վարժությունները:

Երաժշտական խաղը երեխայի ամենասիրելի և ակտիվ գործունեությունն է, որն ուղղված է երաժշտառիթմիկ խնդիրների լուծմանը: Խաղը երեխաների մեջ առաջացնում է ուրախություն, հրճվանք, ակտիվացնում է նրանց զարգացումը, նպաստում երաժշտական ունակությունների զարգացմանը: Երաժշտական խաղերը զարգացնում են երեխաների հուզաշխարհը և որոշակի դեր խաղում նրանց բնավորության ձևավորման գործում: Դրանք նպաստում են երեխաների մեջ զսպվածություն, վճռականություն, պատասխանատվություն դաստիարակելուն: Երաժշտությունը ներգործում է ոչ միայն զգայական աշխարհի ձևավորման, այլ նաև շարժումների որակի վրա, դրանք դարձնում գեղեցիկ, ներդաշնակ, ռիթմիկ և արտահայտիչ: Ռիթմը ակտիվացնող մի շարք երաժշտական առաջադրանքներ, մեծ հետաքրքրություն են առաջացնում և հաճույք պատճառում նրանց, մանավանդ, որ կարողանում են իրենց շարժումները համաձայնեցնել երաժշտությանը: Երաժշտական խաղերն իրենց մատչելիության, բովանդակության պարզության և երաժշտության հետ ներդաշնակ զուգակցման շնորհիվ գրավում ու հրապուրում են երեխաներին, նրանց մեջ առաջացնում առույգ ու կենսախինդ տրամադրություն: Երաժշտական խաղերը նաև զվարճանքի միջոց են: Մանկապարտեզներում երաժշտական խաղերի հնարավորությունները օգտագործվում են երեխաների բազմակողմանի դաստիարակության գործում:

Դիտարկումները ցույց են տվել, որ երաժշտական խաղերի ճիշտ և մտածված անցկացումը մեծ դեր է խաղում երեխաների երաժշտական ունակությունների զարգացման գործում:

Երաժշտական խաղերի տեսակները և ուսուցման մեթոդները

Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների զարգացման համար կարևոր նշանակություն ունեն երաժշտադիդակտիկ խաղերը, որոնք մանկապարտեզում կազմակերպվող կրթադաստիարակչական կարևոր միջոցներից են: Երաժշտական պարապմունքների ընթացքում երեխաներն ունկնդրում են երգեր, երաժշտություն, կատարում են երաժշտառիթմիկ տարբեր գործողություններ: Երաժշտադիդակտիկ խաղերի ժամանակ երեխաները կարողանում են խորացնել, ներկայացնել իրենց բոլոր կարողություններն ու գործունեությունը: Խաղերի միջոցով երեխաները ձեռք են բերում երաժշտության

ունկնդրման, երգչական կարողությունների, երաժշտառիթմական շարժումներ կատարելու, մանկական նվագարաններով նվագելու հմտություններ: Երաժշտադիդակտիկ խաղը, որպես ուսուցման խաղային ձև շատ բարդ երևույթ է: Այն իրականացնելիս միաժամանակ գործում է երկու սկզբունք՝ ուսումնական և խաղային: Խաղերի հիմնական նպատակը երեխաների մոտ երաժշտական ընդունակությունների ձևավորումն է, երեխաների համար մատչելի՝ խաղային ձևով օգնել նրանց տարբերակել հնչյունների բարձրությունը, զարգացնել ռիթմի, տեմբրի և դինամիկ լսողության զգացողությունները: Օրինակ՝ «Երաժշտական աստիճան», «Ուժեղ, թե մեղմ», «Մայր թռչունն ու ճնճղուկները», «Հրաշալի պարկ»:Այդպիսի խաղերը նպաստում են նախադպրոցականի երաժշտասենսոր դաստիարակության իրականացմանը: Երաժշտադիդակտիկ խաղերի ժամանակ երեխաները կարողանում են ձեռք բերված գիտելիքները գործնականորեն կիրառել: Ինչպես ցանկացած այլ խաղ, այնպես էլ երաժշտադիդակտիկ խաղն իր կառուցվածքում պետք է ներառի խաղային գործողությունների զարգացումը, որում միշտ կա մրցակցային տարր, զվարճանք, որոնք տարբերվում են իրենց դիդակտիկ բնույթով: Այս խաղերի դիդակտիկ նյութերը հիմնված են երաժշտական ընկալման զարգացմանն ուղղված խնդիրների վրա: Խաղերը պետք է լինեն պարզ և մատչելի, հետաքրքիր և գրավիչ: Երաժշտադիդակտիկ խաղերից շատերը երեխաները նախ սովորում են խմբասենյակում՝ երաժշտական պարապմունքի ընթացում: Երաժշտական ղեկավարը պարապմունքից առաջ դաստիարակին պետք է բացատրի տվյալ խաղը: Այնուհետև դաստիարակները համատեղ փորձում են օգնել երեխաներին հասկանալ խաղի կանոնները: Դաստիարակը նրբանկատորեն ուղղորդում է խաղի ընթացքը, վերահսկում է խաղացողների հարաբերությունները: Խաղերի ընթացքում ըստ հմտությունների ձևավորման աստիճանի պատկերացնում ենք խաղերի հետևյալ տեսակները.

- Դիդակտիկ խաղեր – ձեռք են բերում երաժշտության մասին նոր գիտելիքներ, կատարողական հմտություններ և կարողություններ
- Վերահսկիչ խաղեր – ամրապնդում և ստուգում են նախկինում ձեռք բերված գիտելիքները, կատարողական հմտություններ
- Ընդհանրացնող խաղեր – ձեռք բերված գիտելիքների ինտեգրում

Երաժշտության ընկալման հմտությունները ամրապնդվում են, երբ ստեղծագործության ունկնդրումն ուղեկցվում է գործողություններով: Օրինակ՝ երբ երեխաները քայլում են, ծափահարում կամ օգտագործում են տարբեր մեթոդներ՝ որոշելու երաժշտության բնույթը, ժանրը, երաժշտական կերպարը, արտահայտչամիջոցները: Երաժշտադիդակտիկ խաղերը հաջողությամբ կիրառվում են երգեցողության մեջ,

ռիթմիկ շարժումների գործընթացում, մանկական նվագարանների նվագելիս,որը մեծ հետաքրքրություն է առաջացնում երեխայի մոտ: Երբ երեխաները ծանոթանում են տարբեր բնույթի գործիքային, վոկալ ստեղծագործություններին, նրանք որոշակի զգացողություններ են ապրում: Երաժշտադիդակտիկ խաղերն անցակցվում են երաժշտական պարապմունքների ընթացքում, տոների և զվարճանքների ժամանակ և այլ ժամերի:

Երաժշտական խաղերը տարբերվում են իրենց բնույթով և կառուցվածքով , բաժանվում են 2 տեսակի՝ սյուժետային և ոչ սյուժետային:

Սյուժետային խաղերն ունեն բովանդակային տեքստ, որը երեխաները պետք է ներկայացնեն շարժման միջոցով: Դրանք ընթանում են երգի կամ ծրագրային երաժշտության ուղեկցությամբ: Դրանց բովանդակությունը մատչելի է, մոտ և հարազատ երեխաներին, քանի որ կերպարները վերցվում են ծանոթ հեքիաթներից կամ շրջապատից: Կրտսեր խմբում սյուժետային խաղերի ընթացքում երեխաները կատարում են կենդանիների պարզագույն նմանակումներ՝ նապաստակը թռչկոտում է, թռչնակը թափահարում է թևերը և այլն: Օրինակ՝« Անտառի տնակը», « Շլդիկ-մլդիկ մի նապաստակ», « Սագերն ու Գագիկը» և այլն:

Ոչ սյուժետային խաղերը չունեն կոնկրետ բովանդակություն, դրանք կազմված են առանձին խաղային առաջադրանքներից՝ պարային տարրեր, տարբեր շարավոխումներ և այլն: Ոչ սյուժետային խաղերն ընթանում են կանոններով և մեծ մասամբ մրցակցային բնույթ ունեն: Նման խաղերը պահանջում են ճարպկություն, արագ կողմնորոշվելու ունակություն, շարժվել արտահայտիչ, ռիթմիկ, երաժշտական տեմպին, ռիթմին ու բովանդակությանը համապատասխան: Օրինակ՝ « Ում շրջանը շուտ կհավաքվի», « Թաշկինակով խաղ», «Գտիր քո գույնը» և այլն:

Երաժշտական խաղի հաջող անցկացումը մեծ չափով պայմանավորված է այն բանով, թե երաժշտական ղեկավարը և խմբի դաստիարակը ինչպես են նախապատրաստում պարապմունքը: Անհրաժեշտ է, որ նրանք նախօրոք յուրացնեն խաղի բովանդակությունը, երաժշտությունը, դրանց փոխադարձ կապը, սովորեն շարժումները, որոշեն թե խաղի որ մասում ինչ բացատրություն պետք է տան երեխաներին և ինչ մեթոդներ կիրառեն արագ և ճիշտ յուրացման համար: Նոր երաժշտական խաղ ուսուցանելիս շատ կարևոր է առաջացնել հետաքրքրություն, որը կնպաստի երեխաների ուշադրության կենտրոնացմանը և ակտիվացմանը: Դա իր հերթին օգնում է երեխային ավելի հեշտությամբ ընկալելու և հասկանալու երաժշտությունը, խաղի բովանդակությունը: Յուրաքանչյուր խաղի բովանդակություն ու պահանջ երեխաներին պարզ ու հասկանալի

դարձնելու համար կիրառվում են յուրօրինակ մեթոդներ: Խաղի արագ և արդյունավետ յուրացման ամենակարևոր պայմանը երաժշտության և շարժումների միասնական ընկալումն է երեխաների կողմից:

Երաժշտական խաղերի ընթացքը սկսվում է ակտիվ ունկնդրումից, ինչը պահանջում է անմիջական արձագանք: Պարապմունքը սկսվում է երաժշտաշարժական վարժություններով, որի մեջ ընդգրկվում են նոր ուսուցանվող խաղի որոշ տարրեր: Խաղը բացատրելիս նախ կատարվում է երաժշտությունը, բացահայտվում նրա կառուցվածքը՝ քանի մասից է, բնույթը, ռիթմը, տեմպը, կրկնվող մասերը: Ավագ խմբերում՝ նաև երաժշտական նախադասությունները և ֆրազները: Առաջին անգամ խաղի երաժշտությունը կատարվում է ամբողջությամբ, արտահայտիչ, ճիշտ նվագակցությամբ: Այնուհետև տրվում է խաղի համառոտ նկարագրությունը և նորից կատարվում երաժշտությունը: Այս մեթոդով ուսուցանվում են ոչ սյուժետային պարզ խաղերը: Ունկնդրումից հետո դաստիարակը համառոտ նկարագրում է խաղի բովանդակությունը. երաժշտության առանձին մասերում ինչ պետք է անեն երեխաները: Բացատրությունից հետո նորից կատարվում է երաժշտությունը և առաջարկվում երաժշտության բնույթին ու ռիթմին համապատասխան գործողություններ կատարել: Երաժշտության մանրակրկիտ վերլուծությունը օգնում է երեխաներին ճիշտ ընկալել երաժշտության մասերը, նրանց բնույթը, որն էլ նպաստում է խաղային շարժումների ճիշտ և ժամանակին կատարմանը: Երգի, պարի բաժնից հետո կատարվում է խաղի ուսուցումը: Այդ պարապմունքի ժամանակ խաղը կրկնվում է երկուսից երեք անգամ: Խաղի ժամանակ երաժշտական ղեկավարը և խմբի դաստիարակը հետևում են, որ երեխաները ուշադիր լսեն երաժշտությունը, շարժումները համաձայնեցնեն երաժշտության առանձին մասերին: Խաղի ավարտից հետո դաստիարակը խրախուսում է խմբի այն երեխաներին, որոնք ճիշտ էին կատարում խաղային շարժումները: Ավագ խմբում խաղին առաջադրվող պահանջները ավելի բարդ են: Երեխան պետք է կարողանա լսել և տարբերել երաժշտական ֆրազները, իր շարժումները համաջայնեցնի երաժշտության բնույթին, երաժշտական արտահայտչական բազմաթիվ միջոցներին՝ դինամիկային, ձևին և այլն, որոնք ավելի բարդ բնույթ ունեն, քան նախորդ խմբերում : Ամեն մի խաղ սովորեցնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահատկությունները և ուսուցման համար կիրառել մտածված մանկավարժական մեթոդներ ու հնարներ:

Երաժշտական խաղերը որպես ստեղծագործական

Ունակությունների զարգացման միջոց

Խաղը լայն հնարավորություններ է տալիս երեխաների հետաքրքրությունների դրսևորման և ստեղծագործական մտածողության ակտիվացմանը, որոնց ձևավորումը սկսում է դեռևս վաղ հասակից:

Երեխաների նախնական ստեղծագործական ընդունակությունների զարգացման ընթացքում օգտագործվում են բազմաթիվ մեթոդներ ու միջոցներ, որոնք օգնում են խաղերը հետաքրքիր ու մատչելի դարձնելուն:

Շատ կարևոր է խաղի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, առանց որի դժվար է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել առաջիկա գործունեության վրա: Օրինակ, միջին խմբում, մինչև

Արջը և նապաստակը խաղի ուսուցումը, դաստիարակը արջի և նապաստակի մասին կարդում է փոքրիկ պատմվածքներ, ցուցադրում նկարներ, երաժշտական վարժությունների ժամանակ հանձնարարում կատարելու արջին և նապաստակին բնորոշ շարժումներ:

Պարապմունքի ժամանակ երեխաները դաստիարակի հետ միասին բացահայտում են այդ կենդանիներին բնորոշ հատկանիշները՝ արջը քայլում է ծանր, հանգիստ, հոտոտելով իր շուրջը: Նապաստակները վախկոտ են, ցատկում են թեթև, անձայն, աշխույժ: Պարապմունքի ժամանակ երեխաներին առաջարկվում է լսել խաղին ուղեկցող երաժշտական պատկերները, գուշակել, թե դրանցից յուրաքանչյուրը ո±ր կենդանուն է բնորոշ:

Երբ հնչում է Գ. Չթչյանի Արջուկները պարում են ստեղծագործությունը, երեխաները գուշակում են, որ դա արջն է ծանր, հանդիսավոր քայլում: Նրանք ընկալում են երաժշտական ստեղծագործության բնույթը, կերպարները, որը հնարավորություն է տալիս խաղը արագ ըմբռնելու և միաժամանակ խաղային կերպարները արտահայտիչ ու պատկերավոր վերարտադրելու: Երեխաների ինքնուրույնությունը, երևակայությունը զարգացնելու նպատակով, դաստիարակը խաղը բացատրելիս կենդանիների շարժումները չի ցուցադրում, այլ առաջարկում է երեխաներին ինքնուրույն արտահայտել դրանք: Խաղն ավելի գրավիչ ու հետաքրքիր դարձնելու համար դաստիարակը պատրաստում է արջի և նապաստակի գլխարկներ, որը նպաստում է խաղային կերպարների ավելի արտահայտիչ կատարմանը: Ամեն անգամ խաղը կրկնելիս ընտրվում է արջի նոր դերակատար: Դրանով ավելի շատ երեխաներ են ընդգրկվում խաղի մեջ:

Երբ երեխան անհատական դերեր է կատարում, նա դառնում է նախաձեռնող, նրա մեջ զարգանում են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, հետաքրքրությունը, ակտիվությունը և այլն:

Ավագ խմբերում խաղի նկատմամբ պահանջները բարդանում են: Երեխաներից պահանջվում է լսել և տարբերել երաժշտական ֆրազները, շարժումները համաձայնեցնել ինչպես բովանդակության, այնպես էլ երաժշտության արտահայտչամիջոցների հետ:

Այստեղ, ինչպես և նախորդ խմբերում յուրաքանչյուր խաղ ուսուցանելուց առաջ կատարվում է նախապատրաստական աշխատանք: Մինչ՝ Ցանկապատ խաղի ուսուցումը երաժշտաշարժական վարժությունների միջոցով դաստիարակը երեխաներին սովորեցնում է խաղի որոշ տարրեր՝ ծափերով ընդգծել երաժշտական հատվածի սկիզբը, շարքերով, պարային քայլքով առաջ գալ, երաժշտական հատվածի ավարտին կանգ առնել, ապա ետ վերադառնալ, կազմել ցանկապատ: Վարժությունների համար ընտրվում են իրենց ընդհանուր բնույթով, ձևով և կառուցվածքով տվյալ խաղի համար նախատեսված երաժշտությանը նման ստեղծագործություններ:

Հաջորդ պարապմունքին անցկացվում է խաղի երաժշտության ունկնդրում և առաջարկվում է որոշել, թե քանի մասից է բաղկացած և յուրաքանչյուրը ինչ բնույթ ունի: Երեխաները նկատում են, որ երաժշտությունը կազմված է երկու մասից: Առաջին մասը հանդարտ է, երգային, իսկ երկրորդը՝ աշխույժ, ուրախ, արագ, պարային: Դաստիարակը նկարագրում է խաղի բովանդակությունն ու առաջարկում երեխաներին նորից լսել երաժշտությունն ու որոշել, թե ինչ շարժումներ կարելի է կատարել յուրաքանչյուր մասում:

Ըստ երեխաների պարզաբանման, երաժշտության առաջին մասում կարելի է ընկերներին պարի հրավիրել, իսկ երկրորդ մասում, քանի որ այն ուրախ է, աշխույժ, կարելի է պարել և երաժշտության ավարտից հետո իսկույն Ցանկապատ կազմել:

Այս ձևով կազմակերպված ուսուցումը արագացնում է խաղի յուրացումը, այն դարձնում գրավիչ, հետաքրքիր և միաժամանակ նպաստում երեխաների ստեղծագործական ունակությունների ակտիվացմանն ու ինքնուրույն գործունեությանը:

Դաստիարակության ծրագիրը հանձնարարում է ավագ և նախապատրաստական խմբերում զարգացնել երեխաների ստեղծագործական ունակությունները՝ բեմականացնել խաղային երգեր, հորինել խաղերում կերպարային

շարժումների նոր տարբերակներ: Դրա համար անհրաժեշտ է զարգացնել երեխաների ստեղծագործական նախադրյալները:

Հայտնի է, որ երաժշտական խաղը, եթե համապատասխանում է երեխաների տրամադրությանը, ցանկություններին, նրանց մեջ առաջացնում է ակտիվություն, հետաքրքրություն, դա իր հերթին նպաստում է նյութի արագ ընկալմանը և հետագա խորացմանը:

Քանի որ Նունիկի տոնը խաղը իր մեջ ունի անակնկալ պահեր, ուստի այն նպատակահարմար է օգտագործել այն օրերին, երբ նշվում է երեխաներից մեկի ծննդյան օրը: Այդ իրադրությունը երեխաների մեջ առաջացնում է դրական հույզեր, լավ տրամադրություն, ցանկություն՝ նոր, գեղեցիկ պարային շարժումներ մտածել ու ցուցադրել հոբելյարի համար:

Յուրաքանչյուր խաղից հետո դաստիարակը երեխաների հետ քննարկում և գնահատում է նրանց կատարումները, լավագույներին խրախուսում: Դրական գնահատականը երեխաների մեջ առաջացնում է վստահություն իր ուժերի նկատմամբ, օգնում՝ տարբերելու լավը, դրականը, ձգտում՝ գեղեցիկի, կատարյալի նկատմամբ:

Նունիկի տոնը խաղը ուղեկցվում է երգով, որը հնարավորություն է տալիս երեխաներին խաղալու օրվա տարբեր պահերին՝ խմբասենյակում, խաղերի, զբոսանքի ժամանակ: Երեխաները, գտնվելով անկաշկանդ միջավայրում, ամեն անգամ հորինում են ինքնուրույն, հետաքրքիր պարեր: Երեխաների ինքնուրույնության և ստեղծագործական նախաձեռնության զարգացման գործում մեծ տեղ են գրավում խաղային երգերի բեմականացումները, որտեղ նրանք ինքնուրույն կերպով պատկերում են երգի բովանդակությունն ու կերպարներն այնպես, ինչպես իրենք են ընկալում: Բեմականացման համար սկզբում ընտրվում են պարզ երգեր, որտեղ երեխաները պատկերում են միայն մեկ կերպար, այնուհետև առաջադրանքներն աստիճանաբար բարդացվում են և ընտրվում այնպիսի երգեր, որոնք ունեն ծավալուն գործողություններ ու բազմազան կերպարներ:

Երբ երեխաներն արդեն յուրացնում են Անտառում երգը (երաժշտությունը՝ Վ. Արարատյանի, խոսք՝ Վ. Տալյանի), առաջարկվում է այդ բովանդակությամբ մի խաղ հորինել:

Երգը պատմում է այն մասին, թե ինչպես երեխաներն ուրախ խաղում, վազվզում են անտառում, փորձում են բռնել թեթև սավառնող թիթեռներին: Ժրաջան մեղուներն էլ ծաղկից-ծաղիկ են անցնում և քաղցր նեկտար հավաքում: Այդ խմբի երեխաներն արդեն բեմադրել էին Ս. Գալիկյանի □Ես թիթեռ եմ□, Լ. Սաֆարյան □Մեղու□ երգերը: Ամռանը հանգստացել Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկում, զբոսնել կանաչ անտառներում: Երեխաների մեջ կուտակվել էին շատ տպավորություններ , որոնք օգնեցին ճիշտ պատկերելու երգերում արտահայտված կերպարները՝ ուրախ մանուկներին, անհոգ թիթեռներին և ժրաջան մեղուներին: Մեկ անգամ ևս հիշեցվում է մեղվին և թիթեռնիկին բնորոշ շարժումները, ցուցադրվում համապատասխան նկարներ, դաստիարակը երեխաների հետ բաժանում է դերերը, և անցնում են խաղի կատարմանը: Յուրաքանչյուր երեխա աշխատում է յուրովի պատկերել այս կամ այն կերպարը:

Համեմատաբար ավելի դժվար է հորինել նվագարանային երաժշտության բովանդակությանը համապատասխան խաղ: Դա երեխաներից պահանջում է ավելի մեծ ուշադրությամբ և նպատակադրվածությամբ լսել ստեղծագործությունը, զգալ նրա արտահայտչամիջոցները:

Երեխաներին առաջարկվում է ունկնդրել Զ. Ճարեմուզյանի □Ուրախ տղաներ□ նվագարանային ստեղծագործությունը, որոշել Նրա բնույթը, մասերը և համապատասխան շարժումներ կատարել: Երեխաները որոշում են , որ վերջինս ուրախ, աշխույժ երաժշտություն է, բաղկացած է չորս մասից: Այնուհետև կատարվում են երաժշտության առանձին մասերը և առաջարկ վում մտածել, թե յուրաքանչյուր մասում ի±նչ շարժումներ կարելի է կատարել: Երեխաները գտնում են, որ առաջին մասում կարելի է վազել, երկրորդում՝ ցատկապարանով խաղալ, երրորդում՝ գնդակով, իսկ չորրորդ մասում նորից վազել:

Խաղի ժամանակ երեխաները ճիշտ են արտահայտում երաժշտության բնույթը, ռիթմը, շարժումները սկսում և ավարտվում են ժամանակին: Նրանք խաղում են երևակայական ցատկապարաններով, գնդակներով: Խաղի կրկնության ժամանակ նկատվում է, որ երաժշտության երրորդ մասում տղաներից մի քանիսը իրենց շարժումներում պատկերում են □ֆուտբոլ□ խաղը: Նրանք այնքան են ոգևորված դրանով, որ վերջին ակորդի ժամանակ բացականչում են □գոլ□: Այդ հանգամանքը դաստիարակին հուշում է, որ ավելի հետաքրքիր կլինի, եթե նրա մեջ հանդես գա մրցակցության տարրը: Հաջորդ պարապմունքին երեխաներին առաջարկվում է մտածել խաղի նոր, մրցակցական

բնույթի տարբերակ: Երեխաները որոշում են խաղալ այսպես. □Խումբը բաժանվում է տղաների և աղջիկների , որոնք կազմում են երկու շրջան և կանգնում իրենց հատկացված տեղում: Երաժշտության առաջին մասում յուրաքանչյուր խումբ վազում է իր շրջանով, երկրորդ մասում տղաները կազմում են կիսաշրջան և դիտում, թե ինչպես են աղջիկները խաղում ցատկապարանով: Երրորդ մասում աղջիկները կանգնում են կիսաշրջանաձև և նայում, թե ինչպես են տղաները խաղում գնդակով: Բոլոր շարժումները համաձայնեցվում են երաժշտության ռիթմին: Չորրորդ մասում բոլոր երեխաները կազմում են մեծ շրջան և վազում դեպի ձախ: Երաժշտության ավարտից հետո վազում են արագ իրենց տեղերը, որպեսզի նորից կազմեն երկու շրջան: Հաղթում է այն խումբը, որն արագ և ճիշտ է կազմում շրջանը□:

Խաղի այս տարբերակը երեխաներին շատ է դուր գալիս, ու երբ զբոսանքի ժամանակ նրանց տալիս են գնդակներ ու ցատկապարաններ, նրանք անմիջապես բաժանվում են երկու խմբի և սկսում խաղալ իրենց հորինած խաղը:

Պարբերաբար տարվող աշխատանքների շնորհիվ նախապատրաստական խմբի երեխաները ունենում են որոշակի երաժշտական ունակություններ, համեմատաբար զարգացած մտածողություն, երևակայություն, հիշողություն, ուստի նրանք կարողանում են հորինել երաժշտական խաղի ոչ միայն բովանդակությունը, այլ նաև երաժշտությունը: Այդ նպատակով երեխաներին ցուցադրվում է □Աղվեսը և հավերը□ նկարը, առաջարկվում է խաղ հորինել: Մինչ այդ դաստիարակի կողմից տարվում են հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝ կարդում է փոքրիկ պատմվածքներ հավերի և աղվեսի մասին, ուսուցանում է Ռ. Բալայանի □Ջու, ջու□ և Գ. Չթչյանի □Եկեք հաշվենք□ երգերը, երեխաների ուժերով բեմադրվում է □Չարի վերջը□ օպերան (երաժշտությունը՝ Ա. Մանուկյանի):

Այդ բոլորը օգնում են երեխաներին հորինելու նոր խաղ՝այսպիսի բովանդակությամբ. □Հավիկները բակում կուտ են ուտում: Հանկարծ երևում է աղվեսը, հավիկները փախչում են իրենց բույնը: Ով ուշանում է, է, աղվեսը նրան բռնում և տանում է□:

Դաստիարակը առաջարկում է խաղի համար համապատասխան երաժշտություն հորինել: Աղվեսի համար երեխաներն առաջարկում են օգտագործել □Չարի վերջը□ օպերայից այն երաժշտական հատվածը, որը պատկերում է աղվեսի մուտքը բեմ:

Սակայն, դաստիարակը երեխաներին հիշեցնում է, որ օպերայում աղվեսը երբեմն կանգ է առնում, նայում շուրջը, իսկ խաղի մեջ նա պետք է վազի արագ, որպեսզի շուտ բռնի հավիկներին: Ուրեմն ավելի հարմար է հորինել արագ, աշխույժ երաժշտություն:

Չնայած խաղի բովանդակությունը մի փոքր պարզունակ է այս խմբի երեխաների համար, բայց քանի որ իրենք են հորինում, այդ պատճառով էլ դառնում սիրելի խաղերից մեկը: Դաստիարակը երաժշտական ղեկավարի հետ պատրաստում է հավիկներին ու աղվեսին պատկերող գլխարկներ,որն ավելի մեծ բավականություն է առաջացնում երեխաների մեջ: Հետագայում գլխաձկները մնում են խմբասենյակուհի երաժշտական անկյունում, որպեսզի կարողանան ազատ ժամերին էլ խաղալ:

Փորձարարական մաս

Միջին խմբում <<Արջը և նապաստակը>>խազի ուսուցման ժամանակ երեխաներին պատմում եմ մի փոքրիկ պատմվածքներ, երաժշտական վարժությունների միջոցով սովորեցնում արջին ո ւնապաստակին բնորոշ շարժումներ: Պարապմունքի ժամանակ խաղի բովանդակությունը ներկայացնելիս , երեխաները իրենք նշեցին որ արջը քայլում է ծանր, հանգիստ՝ հոտոտելով իր շուրջը, իսկ նապաստակները վախկոտ են, ցատկում են թեթեվ, անձայն և աշխուժ: երբ կատարեցի Գ. Չթյանի <<Նաապաստակները պարում են>> ստեղծագործությունը, երեխաները գուշակեցին որ այդ կերպ նապաստակներնեն ցատկոտում ուրախ և թեթեվ: Երբ լսեցին <<Արջուկների պարը>> ստեղծագործությունը ասացին որ դա արջն է քայլում ծանր ու հանդիսավոր:

Հետևություն

Երեխաները կարողացան ճիշտ ընկալել ստեղծագործությունների բնույթը ու կերպարները, և արագ ըմբռնեցին խաղը: Խաղն ավելի հետաքրքիր դարձնելու համար պատրաստել եի գլխարկներ և դիմակներ:

Եզրակացություն

Ամփոփելով պետք է նշել, որ նախադպրոցական տարիքի երեխաների հիմնական երաժշտական ունակությունների զարգացումը իրականացվում է հատկապես երաժշտական խաղերի միջոցով: Մեծ է երաժշտական խաղերի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական հաշակի զարգացման գործընթացում: Երաժշտական խաղերը նպաստում են երաժշտական կարողությունների զարգացմանը՝ լսողության բարելավմանը և նրանց շարժումները երաժշտության հետ համակարգելու ունակությանը: Խաղերը սովորեցնում են հիշտ կողմնորոշվել տարածության և ժամանակի մեջ, խթանում են երաժշտության ընկալունակությունը՝ ուշադրությունը սևեռելով նրա բնույթի,տեմպի, ռիթմիկ արտահայտչականության ստեղծագործության տարբեր մասերի բնույթի փոփոխության վրա: Մասնակցելով երաժշտասյուժետային խաղերին ընդլայնվում են երեխաների պատկերացումները շրջակա աշխարհի վերաբերյալ: Երեխաները կարողանում են խաղերի ժամանակ ստեղծել հեքիաթային կերպարներին բնորոշ շարժումներ: Երեխաները հաճույքով են մասնակցում երաժշտական խաղերին, որոնց ընթացքում դրսևորում են՝ ճարպկություն, ուշադրության կենտրոնացում, շարժումների համաչափություն, կազմակերպվածություն: երաժշտական խաղերը նպաստում են երեխայի օրգանիզմի ֆիզիկական կատարելագործմանը: Երաժշտական խաղերի ընթացքում երեխաները ոչ միայն ձեռք են բերում հատուկ երաժշտական գիտելիքներ և կարողություններ, այլև ձևավորում են անհատականության անհրաժեշտ գծեր, առաջին հերթին ընկերասիրություն և պատասխանատվության զգացում: Բոլոր երաժշտադիդակտիկ խաղերը նպաստում են երեխաների հոգեկան գործընթացների ձևավորմանը՝ ուշադրություն, հիշողություն, երևակայություն և այլն: Ձեռք են բերում զսպվածություն, սեփական հնարավորությունները գնահատելու կարողություն: Երաժշտադիդակտիկ խաղերը իրականացնում են նախադպրոցականի երաժշտասենսոր դաստիարակությունը, առաջացնում են՝ լսողական, տեսողական,շարժողական ակտիվություն, ինչպես նաև ընդլայնում երեխաների երաժշտական ընկալումներն ամբողջությամբ:

Գրականության ցանկ

1.Կ. ՂԱԶԱՐՅԱՆ, Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ « Երաժշտական պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի ավագ խմբում» Երևան 2019

2. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ, Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Լ. ՍՄԲԱՏՅԱՆ «Երաժշտություն՝ պարապմունքներ կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար» Երևան 2015

3. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ «Երաժշտադիդակտիկ խաղեր» Երևան 2007